ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ՆԳ-2019/22, 10.05.2019թ.

Բողոք ներկայացնող անձ՝ «Արֆարմացիա» ՓԲԸ

Պատվիրատու՝ «Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝ «ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-19/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, «Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայքի ձեռքբերում:

Բողոքի պահանջը՝

Պարտավորեցնել ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ վերացնել «Արֆարմացիա» ՓԲԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը և որպես առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ ընթացակարգի 4-րդ, 10-րդ, 14-րդ, 15-րդ և 17-րդ չափաբաժիններով «Արֆարմացիա» ՓԲԸ-ի հետ կնքել պայմանագիր:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Գ.ՆԵՐՍԻՍՅԱՆ, ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ԾԱՏՈՒՐՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ հղումով.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Սույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը ներառյալ:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

Բողոքաբեր՝ «Արֆարմացիա» ՓԲԸ
ՀՎՀՀ 02505735
Իրավաբանական անձի գրանցման համար 286.120.02608
գրանցված 14.02.1997թ.
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Պուշկին 56

Ներկայացուցիչ՝ Միքայել Ավետիսյան
(անձն. AN 0746270 տրվ. 09.12.2013թ. 003-ի կողմից)
Ծանուցման հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Բաղրամյան 3, 3-րդ հարկ
Հեռ. (094) 21 69 92
avetisyan-mikael@mail.ru

Պատվիրատու՝ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերության
Հասցե՝ ք. Երևան, Անդրանիկի փող., 1 շենք

Գնման ծածկագիր՝ «ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-19/10»
Առարկա՝ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի
կարիքների համար դեղորայքի ձեռքբերում

ԲՈՂՈՔ

«ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-19/10» ծածկագրով «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կարիքների համար՝ «ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-19/10» դեղորայքի ձեռքբերման նպատակով հայտարարված գնանշման հարցման հրավերի հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2019թ. ապրիլի 16-ի N 01 որոշմամբ հրավեր է ներկայացվել «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կարիքների համար՝ «ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-19/10» դեղորայքի ձեռքբերման նպատակով գնանշման հարցման հրավերի վերաբերյալ (այսուհետ՝ Հրավեր):

Վերոնշյալ գնման հրավերի 1.1 կետով սահմանված գնման առարկայի թիվ 2, 4, 6, 7, 9, 10, 13, 14, 15, 16, 17, 18, 22, 23-րդ չափաբաժիններում ընդգրկված ապրանքների գնանշման հարցման հրավերին մասնակցության համար հայտ է ներկայացրել նաև «Արֆարմացիա» ՓԲԸ-ն:

«ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-19/10» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.04.2019 թվականի գրությամբ հայտնվել է, որ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-19/10» ծածկագրով դեղորայքի ձեռքբերման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքում 4-րդ, 10-րդ, 14-րդ, 15-րդ և 17-րդ չափաբաժինների մասով «Արֆարմացիա» ՓԲԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից: Ուստի առաջարկվել է սահմանված կարգով գնումները համակարգող Դ. Գասպարյանին ներկայացնել առաջարկվող ապրանքների [illegible] նկարագիրը՝ պայմանագիր կնքելու նպատակով, կամ հայտնել ընկերության կողմից ընդունվող որոշման մասին տեղեկությունները:

21062-ԼՍ
10.05.2019

Այնուհետև 07.05.2019 թվականին «ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-19/10» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից ստացվել է ևս մեկ գրություն, որով հայտնվել է, որ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերության կարիքների համար «ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-19/10» ծածկագրով դեղորայքի ձեռքբերման նպատակով իրականացվող գնման ընթացակարգի շրջանակներում ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրված եզրակացության համաձայն ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից *վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ,* որը համարվում է անհամապատասխանություն հրավերի պահանջների նկատմամբ և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով՝ Ձեր կողմից ներկայացրած հայտը մերժվում է:

Գտնում եմ, որ «ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-19/10» ծածկագրով «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կարիքների համար՝«ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-19/10» դեղորայքի ձեռքբերման նպատակով հայտարարված գնանշման հարցման հրավերի հանձնաժողովի 07.05.2019 թվականի որոշումն՝ ներկայացրած հայտը մերժելու վերաբերյալ անհիմն է հետևյալ հիմնավորմամբ.

1. «ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-19/10» ծածկագրով ընթացակարգի՝ գնահատող հանձնաժողովի 29.04.2019 թվականի գրությամբ հայտնվել է, որ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-19/10» ծածկագրով դեղորայքի ձեռքբերման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքում 4-րդ, 10-րդ, 14-րդ, 15-րդ և 17-րդ չափաբաժինների մասով «Արֆարմացիա» ՓԲԸ-ն ճանաչվել է **առաջին տեղ զբաղեցրած մասնակից:**

2. «ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-19/10» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմի 07.05.2019 թվականի գրություն համաձայն, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրված եզրակացության համաձայն ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ, որը համարվում է անհամապատասխանություն հրավերի պահանջների նկատմամբ:
   Վերոշարադրյալի կապակցությամբ ցանկանում եմ փաստել, որ «Արֆարմացիա» ՓԲԸ-ի պարտավորությունը, որը ըստ էության հանդիսանում է դրոշմանիշային վճար, որը համաձայն ՀՀ Գնումներ հետ կապված բողոքներ քննող անձի 05.11.2018 թվականի թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/87 որոշման դիտարկվում է որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների մասով ժամկետանց պարտավորություն:
   Հետևապես «Արֆարմացիա» ՓԲԸ-ի ներկայացրած հայտը մերժելու հիմքում չի կարող դրվել այն հանգամանքը, որ ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Հիմք ընդունելով վերոգրյալ փաստական և իրավական հիմնավորումները և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածով՝ խնդրում եմ

պարտավորեցնել «ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-19/10» ծածկագրով «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կարիքների համար՝ «ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-19/10» դեղորայքի ձեռքբերման նպատակով հայտարարված գնանշման հարցման հանձնաժողովին՝ «Արֆարմացիա» ՓԲԸ-ի հայտը մերժելու որոշումը անվավեր ճանաչելու (վերացնելու) և որպես առաջին տեղը զբաղեցրած մանսակից հրավերի 4-րդ, 10-րդ, 14-րդ, 15-րդ և 17-րդ չափաբաժիններով «Արֆարմացիա» ՓԲԸ-ի հետ պայմանագիր կնքելու վերաբերյալ:

Միաժամանակ խնդրում եմ բողոքը բավարարելու դեպքում բողոքարկման վարձը փոխանցել «Արֆարմացիա» ՓԲԸ-ի «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ 163008100220 հաշվեհամարին:

Կից ներկայցվում են՝

1. «Արֆարմացիա» ՓԲԸ -ի պետական ռեգիստրի քաղվածքի պատճենը,
2. բողոքարկման վճարը կատարած լինելը հիմնավորող փաստաթղթի բնօրինակը,
3. լիազորագրի, արտոնագրի և անձնագրիս պատճենը,
4. «ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-19/10» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.04.2019 թվականի գրության լուսապատճենը,
5. «ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-19/10» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.05.2019 թվականի ծանուցագրի լուսապատճենը

«Արֆարմացիա» ՓԲԸ-ի ներկայացուցիչ՝ Մ. Ավետիսյան

10.05.2019թ.